Իրավաբանական անձի վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցումը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը

Կազմակերպական-իրավական տեսակը	Մերժման հիմքեր	Իրավական ակտեր
Իրավաբանական անձ	**1. Միաձուլման, միացման և վերակազմավորման ճանապարհով վերակազմակերպման դեպքերում՝** ***1) խախտված է իրավաբանական անձանց վերակազմակերպման օրենքով սահմանված կարգը,*** մասնավորապես վերակազմակերպման մասին որոշում ընդունած իրավասու մարմնի ժողովի (նիստի և այլն) քվորումն ապահովված չէ, կամ վերակազմակերպման մասին որոշումը չի ընդունվել իրավասու մարմնի կողմից, իրավասու մարմնի որոշմամբ հաստատված չեն միաձուլման պայմանագիրը, փոխանցման ակտը, միաձուլման կարգը և պայմանները և այլն: ***2)պետական գրանցման համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված բոլոր փաստաթղթերը չներկայացնելը կամ ներկայացված փաստաթղթերի ամբողջական չլինելը.*** ***3) ներկայացված փաստաթղթերի անհամապատաս-խանությունն օրենքին կամ իրավաբանական անձի ներկայացրած այլ փաստաթղթերին,*** մասնավորապես իրավասու մարմնի միացման ձևով վերակազմակերպման մասին ընդունած որոշմամբ հաստատված միացող ընկերության բաժնեմասերի (բաժնետոմսերի) փոխարկման կարգի (այն ընկերության բաժնեմասերի (բաժնետոմսերի), որին միանում է) արդյունքում խախտվել է մասնակցի (բաժնետիրոջ) սեփականության իրավունքը, բաժնեմասերի (բաժնետոմսերի) փոխարկումը չի կատարվել բաժնեմասի (բաժնետոմսի) շուկայական արժեքով, իրավասու մարմնի ժողովի (նիստի և այլն) արձանագրությունը չի պարունակում նիստի օրակարգը, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստի ընդունած որոշումները և այլն.	«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ, 43-րդ, 36-րդ հոդվածներ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մաս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 65-րդ հոդված

	4) եթե ոչ առևտրային իրավաբանական անձանց կանոնադրությունը, կանոնադրության փոփոխությունները կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հակասում են օրենքի պահանջներին. (Առևտրային կազմակերպությունների համար ստուգվում են միայն ներկայացված կանոնադրության ամբողջականությունն ու «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածով սահմանված տեղեկությունների, ինչպես նաև իրավահաջորդության մասին դրույթների առկայությունը) ***5) վերակազմակերպման համար ներկայացված կանոնադրությունում, պայմանագրում, փոխանցման ակտում բացակայում են վերակազմակերպված իրավաբանական անձի պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ:*** ***6) փոխանցման ակտում վերակազմակերպված իրավաբանական անձի գույքի ու պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների՝ ներառյալ վիճարկվող պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթների բացակայությունը.*** ***7) առկա է իրավաբանական անձի փոփոխության գրանցումն արգելող կամ սահմանափակող՝ դատարանի համապատասխան որոշում կամ վճիռ*** ***8) վերակազմակերպման արդյունքում նոր գրանցվող (ստեղծվող) առևտրային կազմակերպության հիմնադրի, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի՝ օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկված և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չլինելը.*** ***9) վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծվող իրավաբանական անձի անվանման անհամապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին, եթե անվանման գրանցումը մերժվել է, և անձը չի ներկայացրել այլ անվանում:***	

	2. Բաժանման և առանձնացման ճանապարհով վերակազմակերպման դեպքերում՝ ***1) խախտված է իրավաբանական անձանց վերակազմակերպման օրենքով սահմանված կարգը,*** մասնավորապես վերակազմակերպման մասին որոշում ընդունած իրավասու մարմնի ժողովի (նիստի և այլն) քվորումն ապահովված չէ, կամ վերակազմակերպման մասին որոշումը չի ընդունվել իրավասու մարմնի կողմից, իրավասու մարմնի որոշմամբ հաստատված չեն միաձուլման պայմանագիրը, փոխանցման ակտը, միաձուլման կարգը և պայմանները և այլն: ***2)պետական գրանցման համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված բոլոր փաստաթղթերը չներկայացնելը կամ ներկայացված փաստաթղթերի ամբողջական չլինելը.*** ***3) ներկայացված փաստաթղթերի անհամապատաս-խանությունն օրենքին կամ իրավաբանական անձի ներկայացրած այլ փաստաթղթերին,*** մասնավորապես ներկայացված փաստաթղթերի իրավասու մարմնի վերակազմակերպման մասին ընդունած որոշմամբ հաստատված միացող ընկերության բաժնեմասերի (բաժնետոմսերի) փոխարկման կարգի (այն ընկերության բաժնեմասերի (բաժնետոմսերի), որին միանում է) արդյունքում խախտվել է մասնակցի (բաժնետիրոջ) սեփականության իրավունքը, բաժնեմասերի (բաժնետոմսերի) փոխարկումը չի կատարվել բաժնեմասի (բաժնետոմսի) շուկայական արժեքով, իրավասու մարմնի ժողովի (նիստի և այլն) արձանագրությունը չի պարունակում նիստի օրակարգը, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստի ընդունած որոշումները և այլն. ***4) եթե ոչ առևտրային իրավաբանական անձանց կանո-նադրությունը, կանոնադրության փոփոխությունները կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հակասում են օրենքի պահանջներին.*** (Առևտրային կազմակերպությունների համար ստուգվում են միայն ներկայացված կանոնադրության ամբողջականությունն ու «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի պետական	

	հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածով սահմանված տեղեկությունների, ինչպես նաև իրավահաջորդության մասին դրույթների առկայությունը) ***5) վերակազմակերպման համար ներկայացված կանոնադրությունում, բաժանիչ հաշվեկշռում բացակայում են վերակազմակերպված իրավաբանական անձի պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ:*** ***6) բաժանիչ հաշվեկշռում վերակազմակերպված իրավաբանական անձի գույքի ու պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների՝ ներառյալ վիճարկվող պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթների բացակայությունը կամ գույքի և պարտավորությունների անհամամասնական բաշխումը.*** ***7) առկա է իրավաբանական անձի փոփոխության գրանցումն արգելող կամ սահմանափակող՝ դատարանի համապատասխան որոշում կամ վճիռ*** ***8) վերակազմակերպման արդյունքում նոր գրանցվող (ստեղծվող) առևտրային կազմակերպության հիմնադրի, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի՝ օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկված և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չլինելը.*** ***9) վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծվող իրավաբանական անձի անվանման անհամապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին, եթե անվանման գրանցումը մերժվել է, և անձը չի ներկայացրել այլ անվանում:***	

	Իրավաբանական անձանց փոփոխությունների պետական գրանցման մերժման հիմք է նաև իրավաբանական անձանց կողմից փոփոխությունների պետական գրանցման համար դիմելիս «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին 19.03.2012 թվականի ՀՕ-127-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը չկատարելը. «5. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գրանցված իրավաբանական անձինք փոփոխությունների՝ սույն օրենքով նախատեսված գրանցման համար դիմելիս պարտավոր են գործակալություն ներկայացնել նաև սույն օրենքից բխող, սակայն նախկինում չներկայացված տեղեկատվությունը, որի չներկայացնելը հիմք է իրավաբանական անձի փոփոխությունների պետական գրանցումը մերժելու համար:»:	«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին 19.03.2012 թվականի ՀՕ-127-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մաս